Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 146/6

վարչական տույժ նշանակելու մասին

«22» մայիս 2019թ ք. Վանաձոր

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության պետ Գարիկ Դարբինյանս, քննելով «Բորդեր Բրոկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ-02671136) մաքսային միջնորդ Ալիկ Յարալյանի (ՀՀ, Տավուշի մարզ, գ. Կողբ, 5-րդ փ. տուն 10, նույն. քարտ՝ 000423806) կողմից մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Բորդեր Բրոկ>> ՍՊԸ-ի տնօրեն Ս.Գաբրիելյանը դիմում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ Արևելյան մաքսատուն-վարչություն / մուտք 08.05.2019թ. թիվ 335/ և հայտնել, որ սույն թվականի մայիսի 6-ին թիվ 05100030/060519/0000744 տարանցման հայատարարագիրը լրացնելիս թյուրիմացաբար գրանցման մաքսային մարմին և մեկնման մաքսային մարմին կետերը սխալ է լրացվել՝ Բագրատաշեն մաքսային կետի /05100033/ փոխարեն նշվել է Արևելյան մաքսատուն վարչության կոդը /05100030/: Միևնույն ժամանակ խնդրել են թիվ 05100030/060519/0000744 տարանցման հայտարարգիրը մերժել:

Փաստի առթիվ Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 4-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչի կողմից 07.05.2019թ-ին «Բորդեր Բրոկ» ՍՊԸ-ի մաքսային միջնորդ Ալիկ Յարալյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով: Նշանակվել է գործի քննություն 22.05.2019 թվականին, վերջինս պատշաճ ծանուցվել է , սակայն չի ներկայացել վարչական վարույթի քննարկմանը:

Գործի նյութերի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ <<Գազ Դրայվ 18>> ՍՊԸ-ի անվամբ <<Բորդեր Բրոկ>> ՍՊԸ-ի մաքսային միջնորդ՝ Ալիկ Յարալյանի կողմից 07.05.2019թ. լրացվել է թիվ 05100030/060519/0000744 տարանցման հայտարարագիրը: Հայտարարագրի A և C <<Ուղարկող մարմին>> դաշտերը սխալ է լրացվել,

մասնավորապես. Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի կոդ 05100033-ի փոխարեն լրացվել է Արևելյան մաքսատուն-վարչություն կոդ 05100033:

ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար սույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝ որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչսակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50.000 դրամի չափով:

Վարչական մարմինը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գալիս է այն եզրակացման, որ սույն դեպքով *Ալիկ Յարալյանի արարքում առկա է 17.12.2014թ. ՀՕ-241-Ն <<Մաքսային կարգավորման մասին>> օրենքի 259 հոդվածի 4-րդ կետի ուժով գործող 06.07.2000թ. ՀՀ ՄՕ 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ*:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 221-րդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 214-րդ և 234-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մաքսային կանոնների խախտում կատարելու համար մաքսային միջնորդ Ալիկ Յարալյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ տուգանելով **50.000** ՀՀ դրամ:

2. Որոշման մասին Ալիկ Յարալյանին:

3. Պարզաբանել, որորոշումը ՀՀ մաքսային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն 10-օրյաժամկետում կարող է բողոքարկվել վերադաս մաքսային մարմին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական դատարան:

Սույն որոշմամբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարներն են. ***900005024055՝ գումարի 70% և 900233586016՝ գումարի 30% (ՀՀ պետականբյուջե, կենտրոնականգանձապետարան, Արեվելյանմաքսատուն-վարչություն, ԿՈԴ 29):***

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**